



Ա. ԱԱՀԻՆՅԱՆ

(Ճարտարապետության բնկանձու)

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԶԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐՍԱԲԵՐՅԱԼ*

1955 թվականին Տաճարի ներսում կատարված հետազոտությունների ժամանակ, երբ շնչը վերակառուցման կազմակցությունը հանվել է ին գմբեթակիր բոլոր մուլթիրի և նրանցից սկզբնավորված կամարների ծեփերը, պարզվեց, որ զիս այսօր էլ պահպանվել է այդ կենտրոնագմբեթ հորինվածքունեցող շնչը դպավի մասը։ Խոյն տարվա հայտնի աշխատավայր աշխատանքների արդյունքների վերաբերյալ և շմբիածինա ամսադրությունների վերաբերյալ պատույթի մեջ հայտնել էինք, որ այդ շնչը պահպանվել էն բացի հիշյալ խարիսխներից, նաև համապատասխան մուլթիրը, մուլթիրի իմպուտներից մի քանիսը, գմբեթակիր կամարները և հավանաբար, թեկուզ մեծ վերանորոգությունների ենթարկված, արտաքին պատճեռքուն։ Այնուհետև նշվում է «թե հատկադարձային ինչպիսի նշգրիտ պատճեռ կարող էր ունեցած լինել Վահան Մամիկոնյանի կառուցած շնչը (արտաքինից, թէ՝ խաչաձև), հավանաբար հնարավոր կինքի պարզի պեղումներից ստացված նյութների մշակման ընթացքում»²⁴։

* Տարուակած «շմբիածին» ամսագրի 1956 թվականի № VIII—IX-ից։

^{24.} Շմբիածին, 1955 թ., № 9, էջ 26։

^{25.} Խոյն տեղում։

Այդ նյութների մշակումը և հատկապես ընթացիկ տարվա (1956 թ.) պեղումների նոր նյութները հնարավորություն են ընձեռում պարզել 5-րդ դարի վերջին Վահան Մամիկոնյամի վերակառուցած շնչը հատկապահյին նշգրիտ պատճեռը և այդ կառուցվածքի տարածական-ծավալային հարինվածքի բնույթը։


Խոյն հայտնի է, եզմիածնի Մայր Տաճարի այժմյան՝ թէ՝ ներսից և թէ՝ դրսից խաչաձև նորինվածքը համարվում է 7-րդ դարի կեսերի կառուցվածքը ենթարկվում է, որ 5-րդ դարի վերջներին Վահան Մամիկոնյամի վերակառուցած տաճարը սննդուն է՝ արտաքինից դրսին քառակուսի տեսքը, իսկ ներսից շորս արսիդներ և նրանց անկուններում մեկական սննդակներ (ավանդատներ), եղի, որ 7-րդ դարի կեսերին ներանի կաթողիկոսը քանդել է 5-րդ դարի այդ արտաքինից քառանկունի շնչը ներսի բոլոր սննդակներն (ավանդատները) և արսիդներն ու այդ արսիդների արտաքին պատճեռը պատռելով, դրսից կցել նոր՝ բազմանկայտ արսիդներն ու ստպացել այժմյան՝ թէ՝ ներսից, թէ՝ դրսից խաչաձև հորինվածքը²⁵։

^{25.} թ. Թորամանյան, Այսուհեց հայկական Տարուակածության պատճեռներն, Երևան, 1942 թ., էատ. Ա, էջ 226—227։

Պեղումների նյութերը ցուց են տալիս, որ Վահան Մամիկոնյանի ժամանակ վերակառուցված շենքը ունեցել է այլ ձև և նրա հատակագծային հորինվածքը հետագայում ոչ մի փոփոխության չի ենթարկվել:

Այսպես, վերը պարզվեց, որ Մայր Տաճարի այժմյան դրեթակիր մուլթերի տակ գտնվող կոկնակի խարիսխներից՝ վերևի

վածքի մեջ ներդծված չորս արսիդներ և արսիդների անկյուններում սենյակներ, ապա զմբեթակիր մուլթերի խարիսխների մշակված (պրոֆիլներ ունեցող) չորս ճակատներից երկուականը պնտը է գտնվելին այդ սենյակների և նրանց կից արսիդների միացման հանգույցների պատերի մեջ Բնական է, որ շենքի սկզբնական կառուցողը



Մայր Տաճարի արեմույան արսիդի հարավային անկյան
խարիսխները և նիմեսերը

խարիսխները պատկանել են Վահան Մամիկոնյանի ժամանակ ստեղծված շենքին, իսկ այդ խարիսխների խաչաձև կառուցվածքի չորս ճակատներն եւ մշակված են (պրոֆիլներ ունեն):

Եթե Վահան Մամիկոնյանի վերակառուցված շենքը ունենար քառանկյուն հորին-

նման անիմաստ բան անել չե՞ կարող, որովհետև, ինչու պետք է գմբեթակիր մուլթերի բոլոր խարիսխների չորս ճակատներն եւ մեծ ջանասիրաւթյամբ մշակելին (ընդուռում, հաճախ միհենույն բնույթի, բայց միմյանցից տարրեր քանդակված) և ապա անմիջապես նրանցից յուրաքանչյուրի երկու-

ական ճակատները թաղեին հանդիպակաց պատմիք զանգվածների մեջ, Հասկանալի է, որ մենք այստեղ գործ տնօնքը անշատ կանգնած ժույթերի խարիսխների հետ, որոնք ժամանակին չորս կորմից դիտվել են: Եշանափում է՝ նրանց դիմաց պատմիք, մետաքար և անկյունային սենյակներ չեն էղի: Խոկ այդ ամենը անհնարին է դաշընում բանակուն ձեի մեջ ներգծված չորս արսիդներով և անկյունային սենյակներով նորինածին:

Այժմ ամսնենք, թե ի՞նչ ձեւ է ունեցել Վահան Մամիկոնյանի ժամանակաշրջանում վերակառուցված շենքը:

Խաչիկս նշգից, զեռ 1955 թվականի հետապուտիյունների ժամանակ պարզվել էր, որ 5-րդ դարի վերջերին վերակառուցված շենքից սպահանվել են, բացի հիշյալ խարիսխներից, նաև համապատասխան մույթերը, մույթերի իմպուսներից մի քանիսը, գմբեթակիր կամարները և հավանաբար, թեկուզ մոծ վերանորոգությունների հնարկված, արտաքին պատերը, այսինքն, Տաճարի այժմյան ողջ հորինվածքը, բացառությամբ արսիդների, արևելյան արսիդի երկու կողմերում գտնվող սենյակների (ավանդատների), թերութիւն և գմբեթի:

Սերեսուի և Դրասխանակերտցու վկայություններից գտնենք, որ Տաճարը ունեցել է փայտաշեն գմբեթ և միայն 7-րդ դարի սկզբներին է այն վերաշինվել բարով²⁷:

Այդ իսկ պատճառով, 5-րդ դարի շենքի ամբողջ հորինվածքը պարզվուի համար, 1956 թվականի հետազոտական աշխատանքները տարիվցին միայն տաճարի արտաքին պատերի, արսիդների և ավանդատների ընդհանուր կառուցվածքների ու նրանց միացումների համապատասխան հանդուցների ուսումնասիրության ուղղությամբ:

Առաջին հերթին սկսվեց գմբեթակիր մույթերի տակին գտնվող վերսեի, այսինքն 5-րդ դարի վերջներին կառուցված խարիսխներին համապատասխանող մույթերի ու Տաճարի արտաքին պատերի շինարարական կապի ուսումնասիրությունը:

5-րդ դարի վերջերին կառուցված մույթերը ունեն խաչաձև կտրվածք, այսինքն մույթերի շորս ճակատներից էլ սկզբնավորվել են կամարներ: Հետեւապես, մեկական կամարներ էլ սկզբնավորվել են մույթերի դեպի արտաքին պատերը ուղղված ճակատներից և այդ կամարներից:

27. Պատմութիւն Սերեսու եպիսկոպոսի ի Հերակլէ, Թիֆլիս, 1913, գլ. հե, էջ 141—142:— Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 74—75:

մեկ կրտմետվ հանգելելով մույթերի համապատասխան ճակատի ելունի վրա, մուտքավագ պատմակը կամ վերշինից ելնող որմնամույթի վրա: Այսեղ պատմից կիսում են որմնամույթեր և նրանց վրա էլ նստում են մույթերից սկզբանավորված կամարները: Ասկայից կարող է հարց առաջանալ, արդյո՞ք այդ պատմերը և նրանցից ելնող որմնամույթերը ժամանակակից են մույթերի հիշյալ ճակատներին (Հետևապես և 5-րդ դարի վերջերին ստեղծված ամբողջ մույթերին), թե՝ կառուցվել են մեկ այլ ժամանակ:

Հետազոտությունից պարզվում է, որ
ա) Արտաքին պատմերի վրա գտնվող որմնամույթերի լայնությունները (0,86—0,98 մ.) համապատասխանում են ոչ թե անշատ կանգնած մույթերի համապատասխան ճակատների ներկայումս ունեցած լայնություններին (1,06—1,17 մ.), այլ մույթերի այժմյան կառուցվածքների ներում գտնվող 5-րդ դարի մույթերի համապատասխան ճակատների լայնություններին (0,86—0,97 մ.)²⁸: Բնորում, եթե մի շարք սեղերում որմնամույթերից սկզբանավորվող կամարները զնում են և մույթերի այժմյան կառուցվածքների համապատասխան ճակատների վրա մի անկյունից կոնսուլածն աննորմալ ձևով՝ կախվում (Հարավ-արևմտյան մույթի արևմտյան ճակատում, հուսում հակասության մույթի հուսում և արևմտյան մասամբ և մասամբ էլ հուսության արևմտյան մույթի հուսության ճակատում)²⁹, ապա նույն այդ կամարների ուղղությունները հշտակայացր համբնկուում են 5-րդ դարի խարիսխներին համապատասխանող մույթերի համապատասխան ճակատներին: Այսինքն, որմնամույթերը և 5-րդ դարի խարիսխներին համապատասխանող մույթերի համապատասխան ճակատները կառուցված են միշտ միշտույն ուղղության վրա:

բ) Եթե որմնամույթերից սկզբնավորվող կամարների մեկական կրտմելերը գտնվում

28. 1,06—1,17 մ. շափերը վերաբերում են այդ ճակատների միջև և 1955 թվականի վերակառուցման գոյություն ունեցած լայնություններին: 1955 թվականին անշատ կանգնած մույթերի նոր վերանորոգման համանրող բարոր ճակատները, նույն թվում են ու դեպի որմնամույթերը ուղղված ճակատները աշխիլ լայնացվեցին:

29. Այդ անորմալ անսըը վերացած 1955 թվականի վերանորոգումների ժամանակ, եթե մույթերի բոլոր ճակատների լայնությունները, սկզբնական լայնությունների համեմատությամբ, էլ աշխիլ ժեծաշվեցին:


են ճիշտ և ճիշտ որմնամուլթերի ճակատների ուղղաձիգ հարթությունների ուղղությունների վրա, իսկ մյուս կռունկները նստում են մուլթերի այժմյան կառուցվածքների համապատասխան ճակատների ուղղաձիգ մակերեսներից բավական հետ, ապա այս նույն կռունկները 5-րդ դարի մուլթերի համապատասխան ճակատներում (որմնամուլթերից ենող կրունկների նման) նստում են ճիշտ ճակատի ուղղաձիգ հարթության ուղղության վրա: Այսինքն, որմնամուլթերը և 5-րդ դարի մուլթերի համապատասխան ճակատները իրենց վրա հանգչող կամարների նկատմամբ ունեն միանման (նորմալ) պասավորթյուն (կառուցվածք):

գ) Որոշակի ընդհանրություն գոյություն ունի մուլթերի տակին գտնվող — վերև՝ այսինքն 5-րդ դարի վերջներին կառուցված խարիսխների մշակումների բնույթի (ոճի) և արտաքին պատերի որմնամուլթերի խարիսխների մշակումների բնույթի (ոճի) միջև:

դ) Արտաքին պատերը չնայած տարբեր ժամանակներում ենթարկվել են բազմաթիվ վերանորոգումների, այնուհետեւ, հյուսիսային պատի արևելյան մասում (զրոց) պահպանվել են հնագույն ճակտոնի քիվի մնացորդներ: Թիվի պահող մասը մշակված է մողուցյուններով, որպիսի ձեզ գալով նախաքրիստոնեական շրջանից, հիմնականում բնորոշ է քրիստոնեական վաղ շրջանի կառուցվածքներին: Ճիշտ նման տեսք ունի, առնվազն 4-րդ դարի գործ հանդիսացող՝ Քասաղի բաղիլիկայի արևմտյան ճակատի ճակտոնից պահպանված քիվը: Կասկածից վեր է, որ էջմիածնի Մայր Տաճարի հյուսիսային պատի վրա պահպանված ճակտոնի մնացորդները նույնպես հանդիսանում են քրիստոնեական վաղ շրջանի գործ, և անշուշտ պատկանել են 5-րդ դարի վերջերին վերակառուցված շենքին: Նման տեսակիտ են հայտնել նաև հուշարձաններ տեղում տեսած բազմաթիվ այլ մասնագետներ (Դյուրուա, Թ. Թորամանյան և ուրիշներ)³⁰:

Այսպիսով, թիվ՝ արտաքին պատերի որմնամուլթերի և գմբեթակիր մուլթերի տակին գտնվող 5-րդ դարի խարիսխներին համապատասխանող մուլթերի չափերը, թիվ՝ նրանց միջևանց նկատմամբ ունեցած դասավորությունը, թիվ՝ նրանց խարիսխների

³⁰ Դյուրուան հանդիմանորեն ծանոթ լինելով շենքի սկզբանական կառուցվածքի հետագա հիմնովին վերակառուցմանը, այն համարում է նույնիսկ 4-րդ դարի գործը, իսկ ճարտարապետ Թ. Թորամանյանը գրում է. «Հյուսիսային պատի փոքր ֆրոնտոնները իմ կարծիքով պետք է համարել... Վահան Մամիկոնյանի շինածք...»— էջմիածնի Տաճարը, Թիվիս, 1910, էջ 15:



Մայր Տաճարի հյուսիսային արսիդի արևելյան անկյան խարիսխը և նիմիները

մշակման բնույթը (ոճը) և թիվ՝ հյուսիսային ճակտոնի վրա պահպանված հնագույն ճակտոնի քիվը մնացորդները ցուց են տալիս, որ Տաճարի արտաքին պատերի սկզբանական կառուցվածքներն ու նրանցից ենող որմնամույրերը ժամանակակից են այժմյան գմբեթակիր մույրերի տակին գտնվող 5-րդ դարի վերջին կառուցված խարիսխներին: Ուրաքանչական նույնագույն արտաքին պատերը մնացորդները:

ա) Տաճարի արտաքին պատերի և նրանցից գուրս ենող՝ հարավային, հյուսիսային և արևմտյան արսիդների ուղիղ սկզբների խարիսխների տակ գտնվում են սրբատաշ տուփաքարից կառուցված հիմքերի երկու կամ երեք շարքեր (Տաճարի հարավային կենտրոնական հիմքերը ունեն երեք շարք, հյուսիսային կենտրոնական ունեն երեք շարք), որոնցից վերեկ շարքը անհամեմատ շատ ավելի լավ տաշված: Հիմքերի այդ շարքերը Տաճարի պատերի և արսիդների միացման հանգույցներում նույն մաքուր տաշված ճակատներով ուղիղ անկյունով շրջվում են դեպի արսիդների խորշերի ներսը, այնպես, որ արսիդների ուղիղ սկզբների, նրանց կից որմնամուլթերի և արտաքին պատերի հիմ-

Քերի կառաւցվածքները կազմում են մի օբ-
յանական ամբողջություն

Արտաքին պատերի և արսիդների միացման շահգույցներում, ինչպես պատի ներքեմի, այնպես էլ հիմքի բոլոր շարթերում հետագա ոչ մի կցումների կամ այլ կարգի պերակառուցումների հետքեր չկան:

Այդ փաստը արձանագրված է նաև պետական բնիքացքամ հրամագրված մասնագիտական պաշտոնական հանձնաժողովի կողմէից կազմված ակտի մէջ³¹:

բ) Արտաքին պատերի և հարավային, Հարավային ու արևմտյան արսիդների միացման մեկ հանդույցից մինչև մյուս հանդույցը (արսիդների մեկ ուղիղ սկզբից մինչև մյուս ուղիղ սկզբը) ընկած տարածության վրա, արտաքին պատերի ուղղաթիւններով ընթացող պատերի կամ շիմքերի հայեր կամ³², Ընդուրում, եթե պատերի և

31. Հանձնառողակի կազմի մեջ մտնում էին՝ Հարավյալին արսիգի ու Արա շրջապատի պեղսունների ժամանակ՝ Ներևանի բազմավետի նախագծային արքեօտանոցի վարիչ Անդրանիկոս Մ. Մազմանյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիքայի Արքմանանի պատմության և ահսության սեկտորի ավագ գիտական աշխատակից, Հարաւարապետության թեկնածու Ա. Մհացականյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիքայի Պատմության խստիքուակի Հանգիստական անդամների պատմության և ահսության սեկտորի ավագ գիտական աշխատակից, Պարփական գործադրության թեկնածու Ա. Բարխունյանը, Նույն սեկտորի ավագ գիտական աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Ա. Մարտիրոսյանը և առջերիս գրողը:

Արևադայան արսիդիկ և նրան կից օրմնամուտը թերի Միացման Հանգույցները օրոք լից բաց պահել մշտական զիստեղու համար, այդ իսկ պատճեռով Հայութէ ակտ չկազմվեց, բավարարվեցինք միայն լուսանկառաւ հանումներով Հետապնդում, տեխնիկական նկատառութեան մեջ ենիսով, նպաստականարժութան նաև աշխատավանդիկ միայն արևմտյան արսիդիկ մեկ (Հարավարին) Հանգույցը:

33. Հանձնաժողովների կազմած ակտություն, հարա-
լային արսիդի վերաբերյալ արձանագրված է. «Ար-
քածիդի ուղիղ սկզբների հիմքների անմշական ուղղու-
թյամբ, Տաճարի հարավային պատի հիմքերի շարու-
ակությունը կազմող հիմքեր չկանու Հյուսիսային
արսիդի վերաբերյալ արձանագրված է. «Արսիդի ու-
ղիղ սկզբներն իրար միացնող ոչ մի պատ կամ հիմ-
քը չկանու


արսիդների հիմքերի ներքին շարքերի քա-
րելը իրենց բարձրության մի մասով խորա-
նում են մայր Հռովի (մանր զիտաքառերով
խառնված կավաշողի շերտի) մեջ, այսինքն
հիմքերի ներքին բարերը չարելու համար,
մայր Հռով որպէս խորությամբ փորված է, ա-
պա արտաքին պատերի և արսիդների մի-
ացման մեջ հանգույցից մինչև մբռա հան-
գույցը ընկած արածության վրա մայր Հռ-
ովը դանդում է անազարտ վիճակում՝ նշա-
նակում է՝ այդ արածության վրա արտա-
քին պատերի ու նրանց համապատասխան
հիմքերի շարքերը չեն շարունակվել:

գ) Արաբիզների ուղիղ սկզբների խարիսխ-
ները ըստ կառուցվածքի օրդանական ամ-
րությունները են կազմում իրենց կից որմ-
նակույթների հետ և տնհնարով համական
ճարտարապետությանը բնորոշ բազմագույն
ժակումներ, ըստ մշակման բնդանուք
բնույթի (ոճի), նման են ինչպես որմա-
մույթների, այնպես էլ անշատ կանգնած
բնույթների տակին գտնվող 5-րդ դարի վերջե-
րին կառուցված խարիսխների մշակումների
բնույթին (ոճին): Դժբախտաբար, արսիդնե-
րի ոչ բոլոր խարիսխներն են ամբողջական
տեսքով պահպանված, արև տեսակետից
գրիմիկ անազարտ վիճակում են գտնվում
Հուսիսային արսիդի ուղիղ սկզբների խա-
րիսխները, որոնցից հատկապես արսիդի ա-
ռելելյան հանդույցի խարիսխը այն աստի-
ճան նման է Քասաղի բաղիկեկալի 5-րդ դա-
րի կառուցվածք համարվող արսիդի և 5-րդ
դարի վերջերին (478/9 — 493/4 թ. թ.) կա-
ռուցված Բալնիսի Սիոնի (Վրացական ՍՍՌ)՝
բնույթների խարիսխներին, որ կարելի է նույն-
ակ միջանց հետ շփոթել նրանց լուսա-
նեառնեոս:

Նշանակում է, արտաքին պատերի և արտաքին սեղանի միացման հանգույցների ներքեւ արքերի ու հիմքերի շինարարական օրգանական միասնությունը, պատերի և արսիդների մանրամասների մշակման բնույթի (ոչ ճի) ընդհանրությունը և արսիդների մեկ ուղղիղ սկզբից մինչև մյուս ուղղի սկզբը ընկած տարածության վրա — արտաքին պատերի ուղղություններով ընթացաղ պատերի կամ հիմքերի բացակայությունը ցուց են տալիս, որ Տաճարի արտաքին պատերը և նրանցից գուրու Կիոզ առսիդները կազմում են՝ միաժամանակակի ստեղծված մի միաւնական կառուցվածք: Խոկ այժմյան անշատ կանոնած մույթների կառուցվածքների ներսում գտնվող 5-րդ դարի վերջներին ստեղծված մույթների և արտաքին պատերի — հեռուսապիս և վերջինների հետ ամրագություն պահպաղ արսիդների — միասնությունը ցուց է տալիս, որ էշմիածնի Մայր Տաճարի 5-րդ դարի վերջներին ստեղծված մույթները, առ-

տարին պատերը և արսիդները (Հարավային, Հյուսիսային և արևմտյան)՝, ամբողջությամբ հանդիսանում են 5-րդ դարի վերջերին ստեղծված մի միասնական կառուցվածք:

Ջեանապես, էշմխածնի Մայր Տաճարի այժմյան խաչաձև նորինվածքը ոչ քե ստեղծվել է Ներսէն Գ կարաղիկոսի ժամանակաշրջանում՝ 7-րդ դարի կեսերին, այլ նրանից գրերի երկու զար առաջ, վաճան Մամիկոն-



Մայր Տաճարի հյուսիսային պվանդատան արևելյան պատի տակից անցնող հնագույն ստիլորադի մնացորդները

33. Արևելյան արսիդի պեղումները տեխնիկական պատճառներով հետաձգված են 1957 թվականին Սակայն այդ հանգամանքը չի կարող որեփեց տարակուսանք առաջացնել կատարվող եզրակացությունների նկատմամբ, որովհետև, եթե արևելյան արսիդի ուղղի սկզբների տակ, անշատ կանգնած մույթերի նման գտնվեն կրկնակի խարիսխներ, նշանակում է՝ արեվելյան արսիդը հիմնագրված է գեռ 4-րդ դարից եթե ունենա որմանամույթերի նման մեկական խարիսխներ, նշանակում է արևելյան արսիդը ժամանակակից է 5-րդ դարի վերջերին ստեղծված շենքին իսկ եթե արևելյան արսիդը ունենա միայն մույթերի ներքերի խարիսխների տիպի խարիսխներ, ապա բացառված չէ, որ արսիդի ամբողջ կառուցվածքը հանդիսանա 4-րդ դարի գործ:

յանի օրոք՝ 5-րդ դարի վերջին տասնամյակներում:

ՀՅՈՒՍԽԱՑԻՆ ԱՎԱՆԴԱՏԱՆ ԿԱՌԱՒՅ-ՎԱՌԹՔ.— Պեղումների ընթացքում պարզվեց, որ

ա) Հյուսիսային պվանդատան հիմքերը կառուցված են երկու շարք սև և բաց շագանակագույն տուփաքարերից։ Հիմքի բալոր քարերը սրբատաշ են, որոնցից անկյունաքարերը տաշված են առավել մաքուր։ Հիմքի ներքեմի շարքի տակ գտնվում է 5—10 սանտիմետր հաստություն ունեցող կրաշտուկախի շերտ։ իսկ այդ ամենը տաճարի մյուս հատվածների հիմքերի նման դրված են կավաճողով խառնված մանր գետնաքարերի համատարած բնական խճաշերտի վրա։

բ) Ավանդատան հիմքերի բոլոր անկուռնագրերը մեկնղմինչ պատցված են իրար և օրգանակիս միացված միջանց։ Խաշես հիմքի, այնպիս էլ պատի սերբել՝ ծնից ազատված մասի կառուցվածքում (ուր հարավոր էր դիտել որմնաշարքերի միացումները), կցումների կամ կարկասանի հետքեր չկան։ Պատերի և հիմքերի բոլոր անկուռնագրերը անկուռնագրեր են միշտ 90°-ի անկյան կառուցվածք։

գ) Ավանդատան հիմքերից անմիջապես վեր գոնզվող պատերի բարերը հիմքի բարերի համեմատությամբ ունեն ավելի նույն առաջնական բարերը թիւ գույնով, թիւ հոգմնաշարքանության աստիճանով։ Հար և նման են միշտ անգամ համարակալուց հետո ավանդատան բացվող գոնզվող պատերի համարի նույն հոգմնաշարքանությամբ աստիճանով։

դ) Հյուսիսային համիլցությամբ գոնի ավանդատան բացվող գոնի համարի բոլոր մուտքերի հատակները գոնզվում են զրբին նույն հորիզոնի վրա։ Ըստորում, նաևց գոնի ավանդատան բացվող գոնի համարի նույն՝ հյուսիսային կողմանը զրտերված մուտքի հատակը գոնզվում են հիշտ և ձիշտ մի հորիզոնի վրա։ Իսկ այդ բոլոր մուտքերի հատակները չնչին (մի բանի սահմանմատրությունը տարբերությամբ գոնզվում են որմնամույթների խարիսխների ներքնասալիկների ներքերի (այսինքն տաճարի սկզբնական հատակի) հորիզոնի վրա։

ե) Ավանդատան հարավային և արևմտյան պատերի պարագծով ընթացող ստիլորատի մնացորդներ կամ որմէ աստիճանի հետքեր շկան։

զ) Ավանդատան այժմյան սալահատակից ներքեւ գոյություն ունեն միշտ անգին տարրեր հեռավորության վրա զարձյալ երկու հատակ, որոնցից՝ մեկը կառուցված է թրծված աղյուսից, իսկ մյուսը տուփարքերի սալերից։ Տաճարից գոնի ավանդատան բացվող գոնի այժմյան հատակից 14 սանտիմետր ներքեւ գոնզվում է աղյուսից պատրաստած հատակը, իսկ վերջինից 27,5 սանտիմետր ցած կառուցված է տուփարքերի սալերից, որը գոնզվում է Տաճարի 5-րդ դարի սալահատակի հորիզոնի վրա։ Ներքեւ սալահատակի տակ, ավանդատան հարավային պատի արևելյան ծայրի մոտ, բացվեց հնագույն ջրհոր։ Ջրհորն ունի ուղղանկյուն կառուցվածք, բայց նրա պատերը գուգահեռ չեն ավանդատան պատերին։

Եթե ջրհորի հարավային պատի մի ծայրը դրեմ կպատճ է ավանդատան պատին, ապա ջրհորի նույն պատի մյուս ծայրը զգալիորեն հեռանդատան պատերից։

24. Ավանդատան պատերի բարերը (որոնցից հարավոր եղած ծնից ազատված մասում տեսնել միայն երկու շաբթ) ֆասկաները չունեն։

Ենեկով ջրհորի կառուցվածքից, թերեւ կարեն է մտածել, որ այն գոյությունն է ունեցել մինչև ավանդատան կառուցվածքը։ Բայց պատերի ոչ գուգահեռ կառուցվածքը կարող էր լինել նաև պատահականության հմտնանք։ Հետևապես, թե ե՞րբ է ստեղծվել ջրհորը՝ ստուգդ զժվար է ասեմ։

Ջրհորի գոյությունը ցույց է տալիս, որ ավանդատան հարավային պատը խիստակ ստիլորատ չի ունեցել, որովհետեւ ստիլորատի աստիճանները կարող էին փակել այն։

է) Ավանդատան արևելյան պատի զրսի (թանգարանի հյուսիսային սենյակի) կողմից գոյությունն է ունեցել բազմաստիճան ստիլորատ, որի աստիճանները շարդիկ են թանգարանի հատակի կառուցման ժամանակ և մասցրդները առել վերշինիս սալահատակի տակ։ Պեղամենների ժամանակի բացվեցին այդ ստիլորատի շարդիկած աստիճանների մնացորդները և պատից 1,63 մետր հեռավորության վրա ստիլորատի ներքեւ աստիճանը։ Աստիճանը ունի 0,32 մետր բարձրություն և 0,23—0,25 մետր խորություն և պահպանված է դրեմն մասցրատ միակում։ Այդ աստիճանի մաքուր տաշված հորիզոնական մակերեսների վրա պարզ երևում է նաև հաջորդ (ներքեւից հաշված երկրորդ) աստիճանի բարերի շարժածքի տեղը։ Ճիշտ համանման պատկեր բացվեց արևելյան արսիդի արևելյան պատի դրսի կողմից։ Պահպանվել են նաև ավանդատան արևելյան պատի արտաքին փեսի և արսիդի համապատասխան պատի միացման հանգուցում, արսիդի ստիլորատի ներքեւ աստիճանի մնացորդները։

Այսպիսով, հյուսիսային ավանդատան թիւ հիմքերի ու պատերի օրգանական միասնությունը Տաճարի հարավատասխան պատերին ու նրանց հիմքերին, թիւ ավանդատան ու Տաճարի սկզբնական սալահատակների կառուցման միանման բնույթը և միենույն հորիզոնի վրա գտնվելու փաստը, թիւ ավանդատան հարավային և արևմտյան պատերին կից ստիլորատի աստիճանների բացակայությունը, իսկ ավանդատան արևելյան պատի դրսի կողմից նրանց գոյությունն ու կազմը արևելյան արսիդի ստիլորատի հետ ակնառու ցույց են տալիս, որ ավանդատանը օրգանական միացված է Տաճարին և վերջինիս հետ իրեն մի միասնական կառուցվածք հանդիսանում է միևնույն ժամանակի արգասիք։


Նշանակում է 5-րդ դարի վերջերին Տաճարի հետ մեկտեղ կառուցվել են նաև ավանդատները։

ԽՃԱՆԿԱՐԻ ՄՆԱՅՈՒԴՅԱՆԵՐ.— Մայր Տաճարի 1955 թվականի պեղումների ժամանակ

ժույթերի և պատերի հիմքերի ուսումնասիրության ընթացքում Տաճարի հարավային պատի արևմտյան հատվածի հիմքերի մոտ գտնվեց խճանկարի բաց-կանաչագույն ապակուց պատրաստված ոսկեզօծ մի խորանարդիկ Խնձորես նշանութեալ էր գեռ 1955 թվականի պեղումների արդյունքների վերաբերյալ ուղարկված թվականի «Էջմիածին» ամսագրում հրատարակված զրուցում, խճանկարի այդ խորանարդիկը հայտնաբերվել էր Տաճարի 5-րդ դարի կառուցվածքի տակ գտնվող առավել հնագույն շենքի՝ այսինքն Տաճարի սկզբնական կառուցվածքի հիմքերի հորիզոնի ուղղության վրա³⁵,

Հյուսիսային ավանդատան մեջ խճանկարի մնացորդներ գտնվեցին սենյակի 5-րդ դարի սալահատակի ամբողջ մակերեսի տակ, սկսած հիմքերի վերևի եղրի հորիզոնի ուղղությունից մինչև ներքեւի եղրի հորիզոնի ուղղությունը ներառյալ: Ընդորում, սենյակի հիմքի ներքեւի շարքի վերևի եղրի հորիզոնի ուղղությունից մինչև մայր հողը ընկած տարածության մեջ, խճանկարի խորանարդիկները հանդիպում էին անհամեմատ առավել առատությամբ:

Խճանկարի խորանարդիկները կուրս էին գալիս հողի և շինարարական մնացորդների՝ ավագի, պատերի ծեփի, հնագույն շենքի շարքում:



Հնագույն ժիվի բեկոր գտնված Մայր Տաճարի հարավային արսիդի նիմերի մոտից

1956 թվականին, խճանկարի համանման խորանարդիկներ, գարճալ ապակուց պատրաստած (ինչպես ոսկեզօծ, այնպես էլ կապույտ, կանաչ, դեղին և այլ գույների) գտնվում էին Տաճարի հարավային և հյուսիսային արսիդների, նաև հյուսիս-արևելյան հատվածի հիմքերի տարրեր բարձրությունների ուղղությունների վրա, իսկ ապա, մեծ քանակությամբ հայտնարկվեցին հյուսիսային ավանդատան մեջ և հյուսիս-արևելյան մույթից դեպի արևելյան արսիդը ընկած տարածության վրա:

Դախի և կղմինդրի բազմաթիվ բեկորների հետ միախառնված վիճակում: Սակայն, ավանդատան հարավ-արևմտյան անկյունում մայր հողից 40—50 սունտիմետր բարձրությամբ բացվեց միայն պատերի (թի՝ առատապաղի) ծեփի բեկորների հետ միախառնված խճանկարի շարդված մի խոշորագույն զանգված (շերտ), որը գրավելով 1.20×1.80 մետր տարածություն, հարավային և արևմտյան կողմերից ընդհուպ կպած էր ավանդատան հիմքի քարերին, իսկ արևելյան կողմից երիգված էր 0.37 մետր բարձրություն ունեցող տուֆարարի ուղղաձիր կերպով գրված երկու սալերով:

³⁵ «Էջմիածին», 1955 թ., № IX, էջ 27:

Ակնհայտ է, որ խճանկարի մնացորդների այդ խոշորագույն շերաբ անշատված էր խճանկարի նույն ժայրում զանված մյուս մնացորդներից և թաղված էր առանձին:

Ավանդատան միայն այդ անլուսնից զանվեցին 8.000 խորանարդիկներ, իսկ սենյակի մնացած տարածություններից՝ 4.000 հատ:

Թերեւ, խճանկարի այդ առանձին թաղված մնացորդները ժամանակին պատկերել են այնպիսի նկար (անջատ կամ ընդհանուր կոմպոզիցիայի միջ), որը ինչ-ինչ պատճառներով շարժելուց-ավերելուց հետո, այնուհետեւ, գերազանց են նրա մնացորդները ամենիվել մի ինքնուրույն, որոշակի տեղում:

Չնայած սենյակի հատակի տակ սփռված մյուս խորանարդիկները թի՛ իրենց զույներով, թի՛ կառուցվածքով, թի՛ կառուցվածքան («ավագրման») տեխնիկայով և թի՛ շափերով հար և նման են այդ ասանձին տեղում զանրված խորանարդիկներին, բայց և այնպես դժվար է որոշակի ասել՝ նրանք պատկանել են այդ նույն նկարին, թի՛ հանդիսանում են մեկ որիշ մասի կամ մի զույն և այլ ավերված խճանկարի ցրիվ եղած մնացորդներ:

Խճանկարի այդ առանձին թաղված մնացորդները զանվում են սվանդատան մեջ հայտնարերված ցրնորից 20 սանտիմետր հեռավորության վրա ինչպես վերը նշվեց, ցրնորի կառուցման ստույգ ժամանակը դժվար է ասել, սակայն, ակնհայտ է, որ ավանդատան կառուցմից հետո այն օգտագործվել է և նրա պատերը բարձրացված են եղել մինչև ավանդատան սկզբնական սալահատակի վերին հորիզոնին հավասար: Հետագայում, երբ ինչ որ պատճառով ցրնորը զադարել է օդատպությունը, նրա մեջ աստիճանաբար սկսել են կուտակվել ոչ միայն սալահատակից վեր զանվող փոշին ու այլ նյութեր (հող, քար, խեցեղենի կտորներ ու զանազան իրեր), այլև սալահատակի տակ զանվող լիցքի որոշ մասը:

Ավանդատան հմբքերը մայր հողից մինչև սկզբնական սալահատակը ունեն երկու շարք բարձրություն (0,71 մետր), ընական է, նույն տեղում զանվող ցրնորի պատերը ևս պետք է մայր հողից մինչև նույն սալահատակը ունենալին նույն երկու շարքի բարձրությունը: Սակայն պեղումների ժամանակ, երբ բացվեց ցրնորի կառուցվածքը, մայր հողից վերև բարձրացող նրա պատերից պատճանվել էր միայն սերբեկի շարքի բարերի մի մասը. իսկ սերբեկի շարքի բարերի մյուսը մասը և վերեկի շարքի բարերը շկային ³⁶, Պակասող բարերից

³⁶. Արոշվեց ցրնորի կառուցվածքը այլև շատնել սալահատակի տակ և թողնել բաց. Պատերի այդ վիճակը կարելի է տեղում տեսնել:

երեք հատ հանեցինք ցրնորից, որոնք ժամանակին պոկիմել են ընկել էին հորի մեջ, իրենց հետ տանելով շրջապատի, այսինքն՝ սպահատակի տակ զարտթյուն սննեցաղ լիցքի որոշ մասը: Ահա այդ լիցքի հետ, ցրնորի մեջ էր թափմել նաև սպահատակի տակ զանվող խճանկարի մնացորդների մի մասը: Ցրնորի լիցքի վերեկ շերտի մեջ մեար խորության վրա, խճանկարի խորանարդիկները շկային: իսկ ներբեռում սրբան իշնում էինք խորը, ընդուզ մինչև ցրի մակերեսը (որը զանվում է ավանդատան այժմյան հատակից 2,80 մետր ցած), այնքան ավելի էր մեծանում նրանց բանակը:

Առավել շատ խորանարդիկներ գորս եկան ցրի միջից: Ցրնորի նեղ գինելու համանքով հարավոր եղավ ցրի մակերեսից իշնու ներբեռ միայն 60—70 սանտիմետր, այնինչ խճանկարի մնացորդների շերտը իշնում է ավելի խոր ³⁷, ներեւ ցրնորի խորությունը մոտավորապես լինի այսքան, որքան հյուսիսային արսիդի առջև ներկայումս օգտագործվող ցրնորի խորությունը (5,60 մետր), ապա, պետք է նեխազերել, որ ավանդատան ցրնորի գենես շվեզած ավելի բան 2,0 մետր խորություն ունեցող լիցքում կարող են գտնվել խճանկարի ոչ միևնույն մնացորդներ (խորանարդիկներ):

Ցրնորի լիցքի ներբեկ շերտերում խճանկարի մնացորդների առատ գոյությունը, իսկ վարեկի շերտում նրա խսպառ բացակայությունը (չնայած վերեկի շերտը նույնպես զանվում է սպահատակի տակ եղած խճանկարի մնացորդների շերտի հորիզոնից շատ ավելի ցած), բացատրվում է հետեւյալ կերպ: Ցրնորում լիցքի սկզբնական շերտերի կուտակման զուգընթաց, ինչպես տեսներ, սկսվում է ցըրնորի պատերի վերեկ շարքերի աստիճանական քայլայտումը և պատերից բարերը շրջվելով ներբեռ, իրենց հետ տանում են նաև խճանկարի մնացորդներով խառնված շրջապատը լիցքը: Բնական է, հորը կարող էր միանգամբ ցցինել և այդ ամենի վրա կուտակվել սալահատակի վերեկից թափվող լիցքի նորանոր (առանց խճանկարի մնացորդներ պարունակող) շերտեր:

Ի զեպ, ցրնորի միջից գուրս եկած խճանկար մնացորդների վերեկ շերտերում զանվուց կամ պատճառությունը կարելի է այլ ժամանակ շարունակել ցըրնորի լիցքի մաքրումը:

«Ով սուրբ յանանայք զմումեղէն յաղարս յիշեց...»: Յիշեց[է] բառի «էլք» մասնիկը չկա, հավանարար իրի այդ մասի կոտրվածքի հետ ընկել է:

³⁷. Զյուն ամիսներին ցրնորի լորի մակերեսը զգալիորեն կիրածի. ենթադրվում է այդ ժամանակ շարունակել ցըրնորի լիցքի մաքրումը:

Հեազրության (պալեոգրաֆիայի) ժամանակաները (Կ. Ղաֆաղարյան, Ս. Բարիսովդարյան) զբերի ձևից ենթադրում են, որ այդ իրու կարող է հանդիսանալ 7-րդ դարի գործ³⁸:

Ինչպես երևում է սալահատակի տակից խճանկարի մնացորդները պարունակող լիցովին գուգընթաց, շրջորն են թափվել ինչ որ իրեր նաև սալահատակի վերևից: Նշանակում է, զրշորի մեջ, 5-րդ դարի սալահատակի տակ գտնված հնագույն լիցը նյութերի (խճանկարի մնացորդների) հետ մեկտեղ, միանգամայն հնարավոր է, որ հանդես գտն

Խճանկարի մնացորդների մի խոշորագույն շերտ բացվեց նաև Տաճարի հյուսիս-արևելյան մուլթից դեպի արևելյան արսիդը ընկած տարածության վրա: Այսակա նույնպես, խճանկարի մնացորդները հանդես են զալիս Տաճարի 5-րդ դարի սալահատակի տակ գտնված շինարարական մնացորդների լիցը հետ մտախառնված: Լիցըն սկսվում է հիմքերի վերևի եզրի հորիզոնի ուղղությունից և հիմքի ամբողջ խորությամբ իշխում է մինչև մայր հողը: Խոկ արսիդի ընմի առջև, մոտ 2 քառ. մ. տարածության վրա, խճանկարի մնա-



Մայր տաճարի հյուսիսային ավանդատան մեջ գտնված կավե իրի
(մոմակալի?) բեկոր 7-րդ դարի արծանագրությամբ

նաև ավելի ուշ շրջանի նյութեր, նայած, թէ շրջորը եղը է դադարել օգտագործվելուց և նրա մեջ առաջացած լիցը որբան ժամանակում է կուտակվել:

38. Նման գրեթե արծանագրություններ գտնվել են նաև Դվինամ կղմինդրների վրա, որոնցից մեկի վրա հիշատակված է «Ես Յովհաննէ» վարդապետ ծառայ Մըրու Գրիգորի յազաւիս լիշեցէր ի Տէլքու: (Տէ՛ս Կ. Ղաֆաղարյան, Գվին բազարը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 247:)

յորդներով միախառնված լիցը թշնում է մայր հողից ավելի ներքեւ: Այս մասում լիցըն ունի 1,80 մետր խորություն, որի ներքեւ եզրը գտնվում է այժմյան սալահատակից 2,72 մետր ցած: Լիցըն տակ բացվեցին հորիզոնական ուղղությամբ միմյանց կողքի դրված տուֆարարի երկու սալ: Սակերը շարված են գետաբարերի վրա, իսկ վերցիններու կիսով չափ ընկղմված են չըրի մեջ:

Զուրը գտնվում է Տաճարի հյուսիսային արսիդի առջևի և ավանդատան մեջ գտնվող

բրնորների շրերի մակերեսների հարթունի վրա և միացված է Տաճարի տակ գտնվող գետաջրերին: Արաբարերից մեկն ունի 0,42 մետր լայնություն և 0,66 մետր լայնություն, իսկ մյուսն ունի 0,25 մետր լայնություն և 0,75 մետր մասնելով բեմի լիցքի տակ, զիսիս շարունակվում է: Հնարավոր չեղակ որոշել երկարության լրիվ շափը:

Թե ի՞նչ սաւաբարեր են զրանք, որոշակի դժվար է ասել մինչև արելելան արսիվի ամբողջ մակերեսի պեղումները, որոնք պետք է տեղի ունենան 1957 թվականի մարտարապատման աշխատանքներին զուգընթաց: Դրանք հազիվ թի գետաջրերի հեռացման համար պարասատած ցամաքցցման առուների (դրենաժի) ինչ որ կառուցվածքի մնացրդներ հանդիսանան, որովհետեւ այդակ թափված լիցքը մոտ 1 մետր շառավիզով բռնում է բավական ընդարձակ տարածություն. իսկ որոշ մասն էլ զեւ մեծ ճակատով շարունակում է մոտեն բեմի տակ: Մի զուցիչն որ հնագույն գետանափոր սենյակի (?) սաւահատակի մնացրդ է, որի ներքեւում զոնվով լիցքը, Տաճարի տակ զոյլություն ունեցող մյուս գետաջրերի հետ մեկտեղ, սկզբում եղել են ավելի շած, իսկ հետագայում բարձրացել են վեր:

Ուրեմն Տաճարի այս մասում հանանկարների մնացրդներով միախառնված լիցքը սկզբով է 5-րդ դարի սաւահատակի ներքեւի հորիզոնից և իջևելով մայր հողից ցած, հասնում ինչ որ հնագույն սաւահատակի: Լիցքի մեջ կան պատի (թի՝ առաստաղի) ծեփի մնացրդներ, հնագույն շենքի կրաշաղախի կտորներ, տուֆարքի և մասնավորապես կղմինդրի բազմաթիվ բեկորներ: Հանախակի հանդիպում էին նաև խեցեղենի կտորներ: Խանկարի մնացրդները թափված են միջանց վրա: Խորանարդիկները դրամ էին գալիս մեծ քանակությամբ: Դժբախտաբար հնարավոր շեղավ ամրողը հավաքել, որովհետեւ զդալի մասը գտնվում էր բեմի տակ, իսկ բեմը, ինչպես նշվեց, պետք է պեղվի: 1957 թվականին:

Այս տեղից հավաքվեց խճանկարի ավելիքան 5.000 խորանարդիկ:

Խնձակես ցուց են տալիս թի՝ ավանդատան մեջ և թի՝ այստեղ բացված խճանկարի մնացրդների շերտերը, խճանկարը ժամանակին ամբողջապես ավերված է եղել. մնացրդների մեջ զգունվեցին նույնիսկ բեկորներ, որոնցից ինչ որ շափով, թեկուզ հեռակոր կերպով, հնարավոր լիներ պարզել նկարի բռվանդակությունը կամ վերաբարդիկն առանձին հատվածներ:

Արևելյան արսիդի առջև հնարավոր եղավ դանել միայն ծեփի շաղախի կտորների վրա դեռևս կպած խճանկարի երկուսից մինչեւ յոթ

խորանարդիկ ունեցող առանձին բեկորներ, որոնք լիովին հնարավորություն են տալիս պարզել, ինչպիս խճանկարի կառուցվածքում օգտագործված է նյութերն ու նրանց բազագրությունները, այնպիս էլ խճանկարի համարման-կառուցվական տեխնիկան:

Այսպիսով Տաճարի բոլոր հատվածներում հայտնարկելով խճանկարի մնացրդները անխափի զոնվում են 5-րդ դարի սաւահատակի տակ զոյլություն ունեցող շինարարական լիցքի մեջ, սկսած մույթերի հիմքերի վերին եղրի հորիզոնի ուղղությունից մինչև ներքերի եղրի հորիզոնի ուղղությունից մինչև ներառյալ: Բնդ որում հյուսիսային ավանդատան մեջ խճանկարի մնացրդները զանգված էին ավանդատան 5-րդ դարի սաւահատակի ամբողջ մակերեսի տակ, ընդոււղ մինչև մայր հողը:

Խնձակես արդեն տեսանք, թի՝ Տաճարի, թի՝ ավանդատան հիմքերը կառուցված են սրբատաշ տուփաբարերից: Իսկ այդ նշանակում է, որ հիմքերի կառուցված ժամանակ, հիմքերի ամբողջ պարագծով շրջապատի հողը հանվել է, որպես պարագի հնարավորություն ստացվի շարել հիմքերի շարքերի բարերը և ապա հիմքերի կառուցվումն ավարտելուց հետո նորից լցվել է այն Ալդ լիցքը, հասկանալի է, պետք է լցվեր հիմքերի կառուցվումից անվիշապես հետո: Մի պահ ենթադրենք, որ այն լցվել է հիմքերի վրայից բարձրացված պատերի մի մասի, կամ ամբողջի կառուցվումից, կամ, ինչ որ երբեք հնարավոր չէ, նույնիսկ ամբողջ շենքի կառուցման բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո: Միևնույն է, բոլոր գեպարքերում այն պետք է լցված լիներ նույն 5-րդ դարում: Բնական է, այդ լիցքի մեջ գոյություն ունեցած խճանկարի մնացրդները, նույնպես լիցքի հետ այդտեղ են լցվել 5-րդ դարում: Հետևապես 5-րդ դարում խճանկարը դառնվել է արդեն ավերված վիճակում:

Ուրեմն Վահան Մամիկոնյանի օրոք կատարվող շինարարության ժամանակ, խճանկարն իբրև մի առավել հնագույն շենքի պատկանող մաս, արդեն ավերված վիճակում այդ նույն շենքի մնացրդների հետ միջախառնության սկզբանի կառուցված շենքից առաջ, նույն տեղում գոյություն ունեցած քրիստոնեական շրջանի մեջ այլ, առավել հնագույն շենքի: Իսկ այդ շենքը, ինքնը ստիգմատային հասկանալի է, կարող էր լինել ոչ այլ ինչ, եթե ոչ Տրդատ:

3-րդ թագավորի և Դրիգոր լուսավորչի ժամանակաշրջանում, 4-րդ դարի սկզբներին ստեղծված Մայր Տաճարի նախնական կառուցվածքը:

Ին եղբ է խճանկարն ստեղծվել, առայժմ անհնարին է ստույգ ասել: Խճանկարի մնացորդների մեջ զանգող խորանարդիկների արտարին մակերսիների շափերը ($0,8-1,8$ քառ. սմ., սկիզբաների մեջ հանդիպում են նաև ամելի փոքր շափերի խորանարդիկներ), օգտագործված գույնների գույնների հարուստ երանգավորումը համապատասխանում են 4-րդ դարի կեսերից մինչև 6-րդ դարն ընկած ժամանակաշրջանի խճանկարային արվեստում օգտագործված խորանարդիկների շափերին, նրանց գույներին և երանդավորմանը³⁹:

Եվ իրոք, հազիվ թե նման բարձր արվեստով կատարված խճանկարը ստեղծված լինի բրիտանական արվեստի սկզբնավորման առավել վաղ շրջանում. ակայյն, միանգամայն հնարավոր է, որ էջմիածնում այն հանդիս եկած լինի 4-րդ դարի կեսերից մինչև 5-րդ դարի առաջին կեսերն ընկած ժամանակամիջոցում, որովհետև 480-ական թվականներին նա արդեն ավերված է եղել:

Այսպիսով պեղումների նյութերը ցույց են տալիս, որ՝

1) Էջմիածնի Մայր Տաճարի այժմյան գըմբեթակիր մույթերի խարիսխների տակ գոյություն ունեն առավել հնագույն մի շենքի խարիսխներու Այդ խարիսխների կառուցվածքիր ձևն ակնհայտ ցույց է տալիս, որ նրանք պատկանել են ոչ թե զմբեթակիր, այլ թաղակապ ծածկով բազիլիկալ կառուցվածքի: Այդ բազիլիկալ կառուցվածքն է, որ ըստ Աղաթանգեղոսի մոտ հիշատակված վկայության, պետք է ստեղծված լիներ բրիտանական կրոնը Հայաստանում պետական ուշակելու (301 թ.) առաջին տարիներին:

2) Հնագույն շենքի խարիսխների վրա զրբված են նոր խարիսխներ, որոնք ըստ Հորինվածքիր պատկանում են զմբեթակիր շենքի, ըստ մշակման բնույթի (ոճի) հար և նման են 5-րդ դարի համանման ձևերի մշակումների բնույթին (ոճին), իսկ ներքեւի խարիսխների

³⁹ А. В. Виннер, Материалы и техника Мозаичной живописи, Москва, 1953, стр. 28—32.

նկատմամբ ունեցած դիրքով (կառուցվածքը) ճշտությամբ ներկայացնում են Ղազար Փարավեցու հաղորդած 5-րդ դարի վերջերի վերակառուցման պատկերը:

3) Ճարտարապետական-շինարարական նյութերը լիովին հաստատում են էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ ինչպես Նկաթանգեղոսի, այնպես էլ Ղազար Փարավեցու հաղորդած վկայությունների իսկությունը:

4) Մայր Տաճարի այժմյան խաչաձև հորինվածքը ստեղծվել է ոչ թե ներսես Գ կաթողիկոսի ժամանակաշրջանում՝ 7-րդ դարի կեսերին, այլ նրանից գրեթե երկու դար առաջ, Վահան Մամիկոնյանի օրոք, 5-րդ դարի վերջին բառորդում:

5) Հայկական գասական ճարտարապետության մեջ կենտրոնագրենթ խաչաձև կառուցվածքի հնագույն տիպը հանդիսանում է ոչ թե արտարինից ուղղանկյուն, ներսից խաչաձև չորինվածքը (կոմպոզիցիան) այլ թի՛ զրսից, թի՛ ներսից խաչաձև կառուցվածքը ունեցող չորինվածքը (էջմիածնի Մայր Տաճարը):

Հետևապես էջմիածնի Մայր Տաճարի 5-րդ դարի հորինվածքը որոշակի ճշտումներ է մտցնում Հայաստանի կենտրոնագրենթ խաչաձև կառուցվածքների տիպերի գասակարգման մեջ:

6) Էջմիածնի Մայր Տաճարում հայտնարկեցնեական բարձր արվեստով կառուցված խորշոր ծավալի խճանկարի մնացորդները Խճանկարը ստեղծվել է 4-րդ դարի կեսերից մինչև 5-րդ դարի կեսերն ընկած ժամանակամիջոցում և 480-ական թվականներին գտնվել է արգեն ավերված վիճակում: Էջմիածնի Մայր Տաճարի խճանկարը հանդիսացել է Հայաստանի բրիտանական վաղ շրջանի խճանկարային արվեստի առայժմ մեզ հայտնի ամենահնագույն օրինակը և ընդհանրապես բրիտանական արվեստի հնագույն նմուշներից մեկը:

Այս նյութերը ոչ միայն որոշակի լույս են սփռում էջմիածնի Մայր Տաճարի նախնական ձևի և նրա կրած հետագա ձևափոխությունների լուսաբանման վրա, այլև մեծագույն նշանակություն ունեն Հայաստանի (և ոչ միայն Հայաստանի) բրիտանական վաղ շրջանի ճարտարապետական-շինարարական արվեստի մի շարք արմատական հարցերի ձշմարտացի ըմբռնման համար:

